ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՈՒՐԱՐՏՈՒ ԱԱԿ ԲԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ	hh	ՈՒՐԱՐՏՈՒ Ա.Ա.Կ. ԲԲԸ	Մեդալը բաղկացած է չժանգոտվող ցինկապատ պողպատե կախիչից և դրան կապօղակով ամրացած սկավառակից: Կախիչը ասեղային ամրակով. Սկավառակն արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից, փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 4մմ (շեղում՝ +/- 0.2մմ): Մեդալն իրենից ներկայացնում է ոսկեգույն շրջանակ, որի կենտրոնում մուգ կապույտ գույնի 26 մմ երկարություն ունեցող հավա¬սարակողմ եռանկյուն է՝ փրկարարի խորհրդանիշը շրջանին ձուլված: Որպես

				նրա շարու¬նակություն փրկարարի խարիսխն է, որի ծողը դեպի ներքև վերածվում է 32 մմ երկարություն ունեցող պատյանի մեջ դրված սրի: Սրի կոթին, 10x4 մմ չափեր ունեցող բռնակի հորի¬զոնական ծողիկին գրված են «ԱՆՎԵՀԵՐ», իսկ շեղբին՝ ուղղահայաց դիրքով «ՓՐԿԱՐԱՐ» բառերը: Խաչ հիշեցնող սուրը վերջանում է ջրափրկարարի խորհրդանիշ հանդիսացող 24 մմ լայնությամբ խարիսխով: Մեդալի շրջանակի եզրագծի ձախ մասում գրված են «ARMENIA», իսկ աջ մասում՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը: Մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ՝ 30x45 չափսե¬րով, վրայից ուղղանկյունաձև ոսկեգույն շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Կախիչը մուգ կապույտ է (CMYK 100;100;6;31) 2 ուղղահայաց 3 մմ լայնությամբ կարմիր (CMYK 10;100;100;49) զոլակներով, որոնք կախիչի ձախ եզրագծից ունեն 4 մմ հեռավորություն: Կարմիր զոլակները 2 կողմից եզերված են 1 մմ լայնությամբ դեղին (CMYK 4;20;95;13) և կանաչ (CMYK 80;7;100;35) զոլակներով: Մեդալի դարձերեսին հորիզոնական 3 տողերով գրված են «ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻ¬ՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, 2 տողով՝ «MINISTRY OF EMERGENCY SITUATIONS RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է մեդալի համարը (սկսած 0814-ից): Կատարվող գրառումների անվանանիշը 3.2 մմ ուղղահայաց ուղղությամբ, տառատեսակը ՝ Arial Armenia: - Մեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին՝ ունենալով նույն

				համաձուլվածքը, ռելիեֆիային պատկերները, գրվածքները, ժապավենը և գունավորումները: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է մեդալների միանմանությունը և չափսերի բարձր ճշտությունը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը ոչ ավել քան 0.1 մմ: Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը: Չի թույլատրվում ` - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը մեդալների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մեդալի հետ տրվում է վկայական (էսքիզ 3):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

УРАРТУ ТПК АООТ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
3				